

ճանաչողը և նպատակը: Նայելով դրոշի վրա մի որոշ տեսակետից, տաղանդաւոր դրոշը, ինչպէս վերը յիշեցինք, մեզ ներկայացնում է թիւրքահայ վերջին քաղաքական գրողին և դրանից առաջ եկած տնտեսական և բարոյական հետեւանքները: Բայց թէ ինչ է կատարվում այդ հայերի օջախի շուրջը, — Բաշկիրի դրա վրա քիչ է ուշադրութիւն դարձնում, իսկ քաղաքացիներ կհանքի վրա կա-րելի է ասել ամենինի ուշադրութիւն չէ դարձ-նում:

Ուրախալի է, որ վերջին ժամանակներս ու-սումնասիրութեան գործը մի քանի քայլ առաջ է գնացել: Մեր պարբերական հրատարակութիւննե-րի մէջ յաճախ ակնը են երևալ թիւրքաց հայերի կեանքից վերցրած պատկերներ, և այդ կեանքին վերաբերեալ այնպիսի նկարագրութիւններ, որ-ոնք մեր առաջ դուրս են բերում վանեցի, մու-շեցի, էրզրումցի կամ բաղէջի հային իր տա-նը, իր օջախի, իր ընտանիքի մէջ եղած միջոցին, որոնք աշխատում են ծանօթացնել մեզ թէ ինչ է թիւրքաց կնոջ աշխարհայեցողութիւնը, ինչ է ամսածում թիւրքահայը, ինչպէս է հասկանում նա իր դրութիւնը, և որոնք են նրա առօրեայ աշխարհայեցողութեան հիմքերը:

Մենք կանգ չենք առնի այն կէտի վրա, թէ որոնք են այդ ուղղութեան համապատասխանող գրականները, այլ միայն մատնանիշ անելով դե-րանց վրա, կը վերջացնենք մեր խօսքը, ցանկու-թիւն յայտնելով, որ աւելի յաճախ լոյս տեսնէին մեր պարբերական հրատարակութիւններում այդ տեսակ գրականներ, որոնք միջոցով կարողանա-լինք գէթ մի ընդհանուր գաղափար կազմել թիւրքահայի առօրեայ կեանքի, նրա ապրուստի, տնային կեանքի, դաշտային աշխատանքի, ար-դեւաբերութեան, ընտանեկան և հասարակա-կան հասկացողութիւնների մասին:

Լ. Պ.

ՄԵՐ ԴՐԱՅՈՒ ԴԻՔԱԼՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՆ Ե

Լրագիրները հաղորդեցին այս օրերս մի ցաւա-լի լուր: Կովկասում բաւական յայտնի և վրա-ցիների մէջ մեծ ժողովրդականութիւն ստացած Նիւստամալի վարոյի երկրագործական դպրոցն այր-վել է: Վնասի քանակութիւնը մեծ է և շատ զգալի է առանց այն էլ շատ քիչ միջոցներ ունե-ցող երկրագործական դպրոցի համար: Անկարելի է, եթէ չտեսնեք յանցանք է մինչև անգամ մեզ հայերիս համար անտարբեր մնալ դէպի այդ դժ-բաղդութիւնը, որը հասել է մեր դրացիներին: Նի-ստամալի վարոյի երկրագործական դպրոցի հիմնա-դիրն է Թիֆլիսում յայտնի, երրորդ քառնի հա-տարար դատաւոր Նիստամալի վարոյ, որը կարելի է ասել ոչնչութիւնից ստեղծել է այդ դպրոցը՝ դնելով դրա վրա իր բոլոր միջոցները և չը խնայելով ոչ մի ջանք բարեօրէն աշխարհ-ցի աշակերտների վիճակը: Ամենին հնչող բան չէ հիմնել դպրոց, այն էլ երկրագործական դպրոց վրաց ժողովրդի մէջ, որը մի առանձին սէր չէ

տանեց դրանից յետոյ, միայն այս աստի, որ միւս օրը երեկոյան ինձ կարելի էր տեսնել մի արա-բական նոսրի վրա, հրացանի ուսուի և նիզակը ձեռքին՝ Արաղայից դուրս դէպի Կոտայի կողմե-րում — սահմանադիր լեռներին մէջ մենակ և չորս կողմս առանց նայելու արշաւելիս...

Դեռ ևս հազուատեսիլիս վրա կարելի էր նկա-տել ձին պահպանող քիւրդի արիւնք և ձեռքս բռնած նիզակի կողմի կարմիր բծերը...

Որչափ արագ և հանգարտ վազում էր նոսրը, որչափ գեղեցիկ էր հրացանը և ամենալաւ պող-պատից չինած նիզակի ծայրը:

Ուր էի գնում — այդ ես ինքս չը գիտէի: Յետին էլ բոլորովին մոռացել էի. չը գիտեմ ինչու...

Դ.

Այո, էֆէնդի, այս բոլորը պատահեց և ամեն մի արագալի քիւրդ կարող է պատմել խեղճի ու լինել և թէ ուր գնաց Սուլէյման աղայի հարսա-նիկան ընծան, որի յախտակողին վնասելու հա-մար ողջ Արաղան օտըր կելա և միայն այսչափ օգուտ ունեցաւ դրանից, որ իմացաւ թէ յափշ-տակողը մի ֆլա *) է և խեղճ է կոչվում:

Դրանից յետոյ շատ անցքեր անցան. եղբորս, վրէժխնդրութեան համար սպանեցին քիւրդերը և ես Մանուկ աղայի երկու օրեական թիկնապահ-ներին յօշոտեցի ի վրէժ եղբորս սպանման...

*) Հայ:

ցոյց տուել և ցոյց տալիս դէպի դպրոցական դրոշ և դէպի հողի մշակութիւնը, այդ պատճա-ռով կարելի է երևակայել թէ որքան եռանդ, որքան սէր է ունեցել այդ դպրոցի հիմնադիրը: զէպի ժողովուրդը և դէպի այդ գործը, որը նա իրագործեց տոկոսութեամբ: Այժմ յանկարծ, երկար տարիների ընթացքում չարարանքով հիմնված դպրոցի շինութիւնն այրվում է և զըպ-րոցի հիմնադիրը զգում է իրան անօգնական դրութեան մէջ: Որքան էլ տեղիք ունենալը կա-կածելու վրաց ժողովրդի եռանդի մասին, այս դէպքում մենք չենք ուզում կանգնել, որ վրա-ցիք կը գործադրեն իրանց ամբողջ եռանդը, չեն խնայի իրանց նիւթական միջոցները անմիջապէս օգնութեան հասնելու այդ գործող ուսումնա-րանին: Մենք թող կը տանք մեզ աւելի ասել, այս դժբաղդութիւնը ոչ միայն վրացիներին է վերաբերում, այլ և մեզ հայերիս. մի և նոյն է, մեր դրացու դժբախտութիւնը մերն է և այդպիսի դէպքում մենք ևս պարտաւոր ենք օգնութեան հասնել, չը խնայելով մեր լուծան: Ուրիմ մենք կարող ենք յոշնալ, որ հայերը նոյնպէս չեն խնայի անկեղծօրէն օգնել մշտապէս դպրոցին, մասնաւորը որ այդ դպրոցում սովորում են և հայ աշակերտներ:

Ս. Հ.

ՆԱՄԱԿ ԲԱՐՈՒՄԻՑ

Գեղեցիկների 8-ին

Բարեգործական ընկերութեան այտուղի ճիւղը ցոյց է տալիս, որ ապրում է և կամենում է ծա-ռայել իր նպատակին: Հաստատ աղբիւրից տե-ղեկանում ենք, որ ընկերութեան անդամների մէջ միտք է յղացել հիմնել մշակների համար խնայողական դրամարկը: Արդէն ընկերութեան անդամներից մի քանիսին առաջարկվել է տեղե-կութիւններ ժողովել ու զեկուցումներ պատ-րաստել թէ այլ տեղերում նոյնանման արկը-ները ինչ հիմունքների վրա են հիմնված:

Յայտնի է, որ այդ ժողովի իրագործելը մի գե-ղեցիկ և օգտակար գործ է: Մտածել մշակների համար, աշխատել այդ թշուառ պանդուխտների արիւնք-քորնքով աշխատած փողերը կանոնաւոր կերպով պահպանել, ամենաազնիւ և ամենարարի գործերից միին է: Եթէ այդ միտքը իրականու-թիւն ստանայ, մեր մանուկ ընկերութիւնը կանէ այն, ինչ որ մինչև այժմ չեն մտածել անկու-մեր տանեակ տարիներ զոյութիւն ունեցող ըն-կերութիւնները:

Լուծում ենք նոյնպէս, որ ընկերութիւնը մտա-դիր է բանալ և մի ընթերցարան կող տարվալ ընթացքում Այդ էլ շատ գեղեցիկ միտք է, բայց թող ներվի մեզ ասել, որ ընկերութիւնը պէտք է աշխատէ, որքան կարելի է ընթերցարանում լինեն հասարակ ժողովրդին դիւրամատչելի և կրթիչ հայերէն շատ գրքեր, որպէս դի հասարակ ամբողջ կարողանալ օգտվել ընթերցարանից, ո-րովհետև ունեւոր դասակարգին պատկանող այն

Հուսէյն աղան կամայ թէ տկամայ վճարեց տուր-քը: Սուլէյման աղան սպանեց իր երկրորդ կնոջ: Յիւսն ամուսնացաւ մի քիւրդ գիւղացի տղայի հետ և խեղճը — ծերացաւ և նրա թեկը յօգնեցին քիւրդ սպանելով:

Ոչինչ չէր զգում իմ աշխոյժը, ինձ համար մի տեսակ զուարճութիւն էր դարձել իմ պատ-ւական նոսրիովն նետի պէս արանալ ընդարձակ դաշտերի մէջ, թուել խրամների վրայից, սլանալ դառնիկ ընդարձակ դաշտերի վրա և այնտե-ղից սև և օրաների կոյտերին... նիզակի ծոծե-նելով վազել մի այծեամի ետեից և Մարթինի հրացանովս կէս ժամ հեռու երևացող մի օրսի զարնելով՝ գլորել նրան բարձրահասակ խոտերի մէջ, ուր ինքս երբեմն պառկումսնջում էի ձիուս սանձը թեկերի մէջ առած և հրացանը ձեռքումս...

Այդ իմ զբօսանքն էր:

Ոչինչ չէր կարող արգելք լինել ինձ, երբ մի խուժը քիւրդերի վրա էի յարձակվում, հրացանիս գնդակներով զլորում էի նրանցից մի քանիսն: Երբ, նիզակովս չամբարում օւրիներին, կեռ սուրս չօղջողացնելով վախցնում միւսներին ու կանգ-նում զլորում թէ ինչպէս է ջարդված այն ա՛յ ու սարսափ աղողը քիւրդը, որը կատու է դառ-նում, եթէ տեսնում է որ իր զլորի գարնող կայ... վայ այն քիւրդին, որը համարձակվե՛ր ան-ցորդներին նեղացնել, կամ մի գիւղ մտնել և հը-րացանով մը դողացնել բոլոր գիւղացիներին՝ նա

անհատները, որոնք ուսուցիչն գիտեն և սիրում են կարգալ՝ օգտվում են արդէն գոյութիւն ունեցող ուսաց մասնաւոր դրամարանից:

Յուսանք ուրիմ, որ Բաթումում շուտով կը լինի մշակների խնայողական արկը և ըն-թերցարան, շնորհով Բարեգործական ընկերու-թեան Լաւ կը լինէր, եթէ ընկերութեան այն անդամները, որոնք աւելի համարում են վայե-լում գործակատարների շրջանում, նրանց հետ աւելի մօտ յարաբերութեան մէջ են, աշխա-տէին գործակատարների մէջ ևս հիմնել մի խը-նայողական դրամարկը, որովհետև նրանց փողերը աւելի մեծ քանակութեամբ և աւելի իրողութեան համար են վատնվում:

Մօտ օրերումս Բարեգործական ընկերութեան անդամներից միին ինիցիատիվով ընկերութիւնը խնդրեց այստեղ գտնվող ուսու-օպերէտային դերասանական խմբին մի ներկայացում տալ յօ-գուտ ընկերութեան և իրանց, տոմսակներ ծա-խել յանձն առնելով: Ներկայացումը աջող անցաւ, ընկերութեան հասաւ մօտ 200 ռուբլի: Տեղական սիրողները վիրաւորել էին, որ հայոց Բարեգործական ընկերութիւնը խնդրում է ուսու-գերասաններին և ոչ հայ սիրողներին: Մեր կար-ծիքով վիրաւորվելու ոչինչ չը կայ: Եթէ հայ սի-րողները կամենում են օգուտ բերել մեր մանուկ ընկերութեանը, էլի կարող են հայերէն ներկա-յացումներ տալ: Ամբողջ ձմեռվայ մէջ եթէ ե-րեք ներկայացում տան և ընկերութիւնը ամեն մի ներկայացումից 100 ռուբլի ստանայ, տար-վայ վերջը նրա դրամադուլը կաւանայ 300 ռուբլիով, որ մեծ նշանակութիւն կունենայ մի-նոր հիմնված ընկերութեան համար, իսկ հայ սի-րողներն էլ մի կերպով կատարած կը լինեն ի-րանց պարտքը դէպի այն ընկերութիւնը, որի ա-ռաջին միտքը եղել է՝ հողալ մշակների նիւթա-կան դրութիւնը բարեօրէն և ամբողջ մտաւոր ասպարէզը լայնացնելու: ***

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՈՐԻՆ

Բաթում, 14 դեկտեմբերի

Հայոց Բարեգործական ընկերութեան Բաթու-մի ճիւղի վարչութիւնս խոնարհաբար խնդրում է հրատարակել ձեր պատուական լրագրի մօտակայ համարներից միում հետեւալ հայելը անցալ նոյեմբերի 26-ին ընկերութեան օգտին տրված թատրոնական ներկայացման:

Մուտքը եղել է. հասոյթ տոմսակներ վաճա-ռումից՝ 582 Լ. 50 կ., նուէրներ՝ 5 Լ. 50 կ., գումարն է 588 ռուբլի:

Ծախս՝ վարձ թատերական խմբին 200 Լ., դանադան ծախսեր 10 Լ., գումարն է 210 ռուբ-լի: Ուստի զուտ արդիւնք եղել է՝ 378 ռուբլի: Այս առիթով վարչութիւնս կարեւոր է համա-րում յայտարարել, որ սոյն ներկայացման աջո-ղութիւնը պարտական էր իր կողմից յատկապէս նշանակված թատերական 4 անդամներից բաղ-կացած յանձնաժողովին, որին պաշտօն էր տըր-

իմ ճանկիցս չէր պրծնում, որովհետև բոլորը դի-տեն վրէժխնդր խեղճին...

Այդ էլ իմ կատաղութիւնն էր:

Իսկ երբ հասցորդներին հետ մի գիւղ էի իջ-նում, խորոված գառը առջևս և գինու տիկը կողքիս էր դրվում. երբ փորս կշտանում էր և Դաղաղի զինին թրջում էր կոկորդս, ո՞վ կար խեղճից աւելի զուարճախօս, կատակաբան և ամբողջ խմբին գուարթացնող... պատմում էի իմ կեանքից անցքեր, ծիծաղեցնում էի պատմելով քիւրդերի վախճանութիւնը, եթէ նրանք մի ընդ-դիմադրող են ճանդկում և անգրով հպարտու-թիւնը, երբ նրանք մի անգէնք մարտու են ձեռք ձգում... Դատեն են լսել այս կատակը, որը շատ է գործածվում Վանում, թէ «տուր ինձ տասը հատ ձեռք-ոտքը կապած մարդ, տես ես ինչ քաջութիւնով նրանց կը կոտորեմ... Այդ իմ կատակն է, եթէ տեսնում եմ, որ տասը քիւրդ իրանց հրացաններով և նիզակներով ամե-նայն քաջութեամբ են մի անգէն խեղճ եղբայ-րակցի ուղարկում... հաստատաբար որ այդպէս են դրանք և ևս ծիծաղում եմ նրանց վրա:

Այդ ևս իմ զուարճութիւնն էր:

Պատմեմ մի. դէպք և դրանից կերտալ թէ որ-քան ճիշդ եմ ասում ես:

Անցաւ տարի մի որ Մանազկերտի գիւղերից մէկում էի գտնվում — իմ քիւրդ զբոյրէի... *)

*) Հայերից շատերը ունեն մի բարեկամ քիւրդ,

ված կազմակերպել ներկայացումներ ըստ իր հա-յեցողութեան, ընկերութեան նիւթական միջոց-ների յաւելման նպատակով: համար վարչութիւ-նըս ստանալով յանձնաժողովից վերոյիշեալ 378 ռուբլի գումարը, հրապարակաւ և յաճութեամբ յայտնում է իր խորին շնորհակալութիւնը յան-նաժողովի անդամներին և մասնաւոր պ. Դա-ւիթ խորադեանին և Արշակ Մատուրեանին, ո-րոնք ոչ մի ջանք չը խնայեցին արդարացնելու համար իրանց վրա զրկած յոյսերը և աջողու-թեամբ պսակեցին սոյն առաջին ներկայացման մասին իրանց անգուլ աշխատութիւնը:

Վարչութիւնս յոյս ունի, որ յանձնաժողովի անդամները նոյն եռանդով կը շարու-նակին կատարել իրանց յանձն առած ազդեալ ապրտականութիւնը նաև ապագայում:

Նախագահ տեղ. վարչութեան՝ Ա. Սարուխա-նեանց.

Գործադիր Մ. Համբարձումյան.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Kacni» լրագիրը հաղորդում է որ Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան գրադա-րանը այս օրերս ստացել է բանասիրական բո-վանդակութեան մօտ 700 նոր գրքեր, մեծ մա-սամբ ուսաց լեզուով: Այդպիսով ընկերութեան գրադարանի գրքերի թիւը հասնում է այժմ 4500 հատորի:

Մօսկվայից հեռագրում են Հիւսիսային գոր-ծակալութեան որ քաղաքային վարչութեան և յատկապէս ընտրած յանձնաժողովի զեկուցման հիման վրա, նահանգական գէստովի ժողովը վճեց՝ բացի տնայնագործական մօզու-մից, հաստատել և մի նահանգական խորհուրդ, որը նպատակ պիտի ունենայ հսկել գիւղական տնտեսութեան զարգացման վրա: Մուգուցը պահպանելու համար նշանակված է 1890 թ.ա-կանին՝ 8000 ռուբլի: Միւսայն որոշված է տալ գիւղացիներին փոխառութիւններ առանց տոկո-սի:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Յայտնի է, որ Ղա-րաբաղի համար միակ հայ դպրոցը, ուր կարելի է փոքր ի շատէ ուսում ստանալ, — դա Շուշու թեմական դպրոցն է: Ուրիմ ցանկանալի կը լի-նէր, որ այդ դպրոցը, որքան կարելի է, շատ ա-չակերտներ ունենալ, որ Ղարաբաղին կը տար բարոյական, իսկ դպրոցին՝ նիւթական օգուտ: Այս հանգամանքը ի նկատի ունենալով, մենք կա-մենում ենք հետեւալ առաջարկութիւն անել հա-յոց Բարեգործական ընկերութեան Շուշու տե-ղական ճիւղին: Ամեն տարի չքաղաքներից շատ շատերը կամենում են մտնել մեր թեմական դպրոցը, բայց չքաղաքներից պատճառով շատ քչերն են կարողանում հասնել իրանց նպատա-կին, որովհետև դպրոցը չէ կարող թուով շատ աշակերտներ ձրլ ընդունել, այլ ընդունում

տանը: Երեկոյ եղաւ, և մենք հաջիւ թէ հացեր-նիս կերել էինք, որ ներս մտան երկու հայ ճա-նապարհորդներ և զիւնրվալ իջնանելու տեղ ու-ղեցին: Իմ քիւրդին չէ պատկի ինձ, հրաւիրեց նը-րանց իր մօտ: Ես ցոյց չը տուի իմ աղգակիցնե-րիս թէ հայ եմ, ուշադրութեամբ զննեցի նրանց անհանգիստ դէմքերը, ծիծաղեցի նրանց վախճա-նայեցանքի վրա և հետաքրքրվեցայ թէ ո՞ր է-լին գնում և ինչ վաճառք էին տանում:

— Այո, խօսեց նրանցից մէկը, որը վանեցու-ման էր հազնվել, այդինքն կարճ և լայն շալ-վար, երկար ուղղունը: *) հազին՝ կարծած վանի (մանուսայից) **) և վրան վանի (բաւա) կոչ-վող բրդեայ կտորից մի երկար վերարկու — աղա, ես մի վաճառական մարդ եմ և չբաստեղ: ***) եմ տա-նում Մանազկերտ, իսկ իմ ընկերս վարժապետ է:

Վարժապետ բառը նա քիւրդերէն «կարդա-ցող» անուանեց:

— Քիւրդերէն գիտէ այդ կարդացողը:

— Ոչ, նա հայերէն, տաճկերէն և ուրիշ լեզու-ներ գիտէ միայն... շատ հպարտ մի տղայ է, հէնց միշտ ասում է թէ ինչու պիտի վախենալ որին անուանում են «քիւրդ», որը բառական թարգմանութեամբ չբարձր է նշանակում:

*) Երկար հագուստ, — արխալուգ: **) Մի կտոր է, որի վրա գործվում է միշտ ուղղահայեաց դը-ժեր կարմիր գոյնով, կտորն իսկ վարդագոյն է լինում. ***) Սալորից կամ թուրքի շինված հա-ցաձև խմորեղէն:

